ներու և ազգերու անունները՝ թէ ինչպէս կը կոչուէին ի հնումն և ինչպէս յետոյ, ըստ զանազան ազգաց։

Գերյարգելի տեառն տեառն մերոյ պանծալի Վանահոր Աբրայիս ողջոյն մեծաւ սիրով ի տէր

Ընկալայ զերկուսին գիրս Ցարգելութեանդ յապրլի 15։ Իսկ զմիւսն ի նոյն ապրլի 29, և յամի տեառն 1756, և զամենայն զոր գրեալ էիք հմտացայ վասն սրբոյն Ցակոբայ, և մանաւանդ զանթոէրբիայ գիրքն ծանուցի մօնսինեօր Անթոնէլիին, նաև զհին այսմաւորի և զհին հարանց վարուց պատմեալսն ցուցաք նմա։ Իսկ նա բաւականեալ ծանուցմանն անթոէրբիայ գրքին և մերոյ սրբազան քաջ հռետորին Գրիգորիոսի Նարեկացւոյն, և յայլոց հեղինակաց յոյն գրով, իսկ զմիւսն խոյս ետ, վասն զի յորում ամի գրեալք են ոչ են յայտ և յորմէ գրեալք։ Վասն այսորիկ մինչև ցայսօր ոչ կատարեցաւ գիրքն սրբոյն Ցակոբայ. և սակս այսր յետս մնաց էնջիքլիքան։ Իսկ վասն արգելման երեք պատարագին զտետրն ոչ է հարք թարգմանել ի հայս ասաց մօնսինեօրն, բայց եթէ կամիկ ես առաքեմ առ ձեզ։ Արդ ո՞վ կարէ գրով և դեղով պատմել աստ եղեալ կռոյ ի մէջ հայոց մերոյ զարմիս...։ Լիբանա[ն]ցի յովսէփ վարդապետն ի դուռն մահու է հասեալ, վասն զի բնթուռո[ա]սացեալ ցաւօք յանցեալ շաբաթի յաւուրն ուրբաթի սկսաւ, և բժիշկն ասեն յոյժ երկարանայ ցաւս այս և երգբայելի։... Վրացի կորկի խան ասացեալն պակասեցաւ աստի, այժմ ի ալիկուռնա փարբանջեալ զխաբէական սուտ զորումն անդ ցանէ։

Արդ յետ ամենայն բանիցս ծանուցանեմ ձեզ, և ոչ միայն ծանուցմամբ այլ աղաչել, վասն զի դէպ է և պատշաճ դնել ի մէջ նոր աշխարհաբար ի ձէնջ տպեցելոյ բառգրքին, ամենայն հատուկք անուանց, այսինքն վասն քաղաքաց և վասն ազգաց, ի հնումն, իսկ այժ[մ] որպիսի կոչիլ և քանիցս փոփոխեալ ըստ բառբարին զանազան ազանց, այսինքն ըստ հնոյ. մերոյ մասամբ կոչէաք Աքանազեան ըստ երեմիայ ԾԱ. 27. և յետոյ Հայկայ Հայկ ըստ Խորենացւոյ և այլ պատմագրութեանց թորգոմացիկ։ Նմանապէս վասն քաղաքաց որպէս ի հնումն մաժակ, յետոյ կապթովկիայ, և ապա Ջեսարէայ կամ կեսարիայ, և ըստ թուրքաց այժմ կայիսեր. այսպէս Դաւագուլին յետոյ եաթօգեայ, ըստ թուրգաց թօքաթ։ Եւ ըստ հնոյ Գարնոյ յետոյ Թէոդոսիբօլի ըստ թուրքաց Էրզուրում։ Եւ այսպէս ևս յունաց պատահեալ որպէս ըստ հնումն եունի կամ եունանի և ըստ մերոյ յոյն. և յետոյ վասն որոյ կոչիլ Կրէք կամ Կրէքօ, որ և Էլէնացի, և այլոց ազանց ազգաց և այլն, և մանաւանդ մերոյ զարմիս Ցաբէթեան մեծին զամենայն ծանուցանել։ Եւ արդ յետ այսորիկ յոյժ է տարակուսանք ինձ վասն խոսրովայ մերոյ թագաւորին ընդ Անակայ եթէ որպիսի է ազգականութիւնք նոցա միմեանց։ Չոչ ունելովս պատմագրեանս այսպէս տաժանիմ. զայս և զայլ ծանուցմունք ի յստամպօլէ կարօտեմ նորագունից իրաց ի ձէնջ տեղականալ և այլն։ Դարձեալ ևս զորքանս գրեանս տպեալ էք մինչև ցայսօր զամենայնս ծանուցանել չնորհս արնէք վասն օգտի և համբաւոյ ձերոյ. ողջ լերուք ի պարծանս մեր և աղաչեմ զձեզ զնոյն աղօթս վասն դիտաւորութեանս իմոյ մի վերջասցի ի ձէնջ մինչև ցաւարտումն առ ի ծանուցանել Գերյարգելութեանդ։ Ողջոյն և սէր ամենայն իմաստուն և Գառնուկք Եղբարց մերոց, և միաբանից ընդ հովանեաւ ստվերին ձերոյ. մնամ աղօթից ձերոյ և նոցին, և ընդ նորա տէրն արարածոց հատուցէ ամէն։

Գերյարգելութեան քում
Ցնչին ծառայ
Ցակոբոս Մեսրոբ Քեահեայ արապեան
Ալքեպս. Լամբրոնի

1756 և ի մայիսի 8
[Հռոմ]